ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«23» դեկտեմբերի 2008թ. N 915

ք.Ստեփանակերտ

ԱՆՄԻՋԱԿԱՆՈՐԵՆ (ԽԱՂԱՍՐԱՀՈՒՄ) ԻՆՏԵՐՆԵՏ ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ[*1)] ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԻՉՆԵՐԸ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԴՐՈՇՄԱՎՈՐԵԼՈՒ, ԿՆՔԵԼՈՒ ԵՎ ՀԱՇՎԱՌԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հաստատագրված վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի *81*[4]*-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան*[*1)] Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Սահմանել *անմիջականորեն (խաղասրահում) ինտերնետ շահումով խաղերի*[*1)] կազմակերպման համար նախատեսված համակարգիչները հարկային մարմնի կողմից դրոշմավորելու, կնքելու ու հաշվառելու կարգը՝ համաձայն հավելվածի:

2. *(ուժը կորցրած է ճանաչել)* [*1)]

3. Սույն որոշումն ուժի մեջ է պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ ինտերնետ շահումով խաղերի կազմակերպմանը վերաբերող պահանջների մասով՝ 2009 թվականի ապրիլի 21-ից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
ԼՂՀ կառավարության
«23» դեկտեմբերի 2008թ.
թիվ 915 որոշման

ԿԱՐԳ

ԱՆՄԻՋԱԿԱՆՈՐԵՆ (ԽԱՂԱՍՐԱՀՈՒՄ) ԻՆՏԵՐՆԵՏ ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ [*1)] ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԻՉՆԵՐԸ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԴՐՈՇՄԱՎՈՐԵԼՈՒ, ԿՆՔԵԼՈՒ ԵՎ ՀԱՇՎԱՌԵԼՈՒ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում է *անմիջականորեն (խաղասրահում) ինտերնետ շահումով խաղերի*[*1)] կազմակերպման համար նախատեսված համակարգիչները հարկային մարմնի կողմից դրոշմավորելու, կնքելու ու հաշվառելու գործընթացը:

2. *Անմիջականորեն (խաղասրահում) ինտերնետ շահումով խաղերի*[*1)] կազմակերպման համար նախատեսված համակարգիչները դրոշմավորվում, կնքվում և հաշվառվում են [*1)] ինտերնետ շահումով խաղերի կազմակերպիչների (այսուհետ՝ կազմակերպիչ) սպասարկման վայրի հարկային մարմնի (այսուհետ՝ սպասարկող ստորաբաժանում) կողմից:

II. ՀԱՄԱԿԱՐԳԻՉՆԵՐԻ ԴՐՈՇՄԱՎՈՐՈՒՄԸ, ԿՆՔՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

3. Կազմակերպիչները մինչև գործունեություն սկսելը *անմիջականորեն (խաղասրահում) ինտերնետ շահումով խաղերի*[*1)] կազմակերպման համար նախատեսված համակարգիչների դրոշմավորման, կնքման ու հաշվառման համար սպասարկող ստորաբաժանում են ներկայացնում՝

1) դիմում համակարգիչների դրոշմավորման, կնքման ու հաշվառման կտրոն (այսուհետ՝ հաշվառման կտրոն) ստանալու մասին՝ համաձայն ձևի,

2) [*1)]ինտերնետ շահումով խաղերի կազմակերպման լիցենզիայի պատճենը:

Կազմակերպիչները դիմումում գործունեության իրականացման յուրաքանչյուր վայրում (հասցեն) և այդ (հասցեում) անհրաժեշտ հաշվառման կտրոնների թիվը նշում են առանձին-առանձին:

4. Սպասարկող ստորաբաժանումը դիմումն ստանալու օրվան հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում կազմակերպչին հատկացնում է հաշվառման կտրոն՝ դիմումում նշված թվին համապատասխան: Ընդ որում, հատկացվող հաշվառման կտրոնների թիվը չի կարող գերազանցել օրենքով սահմանված կարգով ներկայացված ելակետային տվյալների վերաբերյալ հայտարարությունում նշված համակարգիչների թիվը:

5. Համակարգչի դրոշմավորումն ու կնքումը կատարվում է համակարգչի վրա հաշվառման կտրոն փակցնելու միջոցով:

6. Հաշվառման կտրոնը միակողմանի քարտի տեսքով ինքնասոսնձվող, մեկանգամ օգտագործման համար նախատեսված, խիստ հաշվառման փաստաթուղթ է: Հաշվառման կտրոնը ունի սերիա և չկրկնվող հերթական համար: Հաշվառման կտրոնի նմուշը հաստատում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետը:

7. Մինչև հաշվառման կտրոնը կազմակերպչին տրամադրելը սպասարկող ստորաբաժանման կողմից հաշվառման կտրոնի վրա լրացվում են՝

1) կազմակերպչի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը,

2) հաշվառման կտրոն տալու ամսաթիվը, ամիսն ու տարեթիվը:

Նշված տվյալները լրացնելուց հետո հաշվառման կտրոնը կնքվում է սպասարկող ստորաբաժանման կողմից:

8. Կազմակերպչի կողմից հաշվառման կտրոնը փակցվում է համակարգչի վրա այնպիսի տեսանելի տեղում, որ համակարգչի վերանորոգման ժամանակ այն չվնասվի:

Համակարգչի վրա պետք է փակցված լինի չվնասված և ամբողջական հաշվառման կտրոն:

9. Համակարգչի վրա փակցված կտրոնի վնասման դեպքում կազմակերպչի կողմից այդ մասին գրավոր հայտնվում է սպասարկող ստորաբաժանմանը: Այդ համակարգչի դրոշմավորումը, կնքումը և հաշվառումն իրականացվում է սույն կարգին համապատասխան:

10. Հաշվառման կտրոնները սպասարկող ստորաբաժանումների կողմից հաշվառվում են ըստ կազմակերպիչների և ըստ գործունեության իրականացման վայրերի (հասցեների) ՝ Լեռնային

Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի սահմանած կարգով:

11. Սպասարկող ստորաբաժանման կողմից սահմանված կարգով դրոշմավորված, կնքված ու հաշվառված համակարգիչը գործունեության իրականացման այլ վայրում (հասցեում) օգտագործելու դեպքում, մինչև օգտագործվող համակարգչի տեղափոխումը գործունեության իրականացման այլ վայր (հասցե), կազմակերպիչը պարտավոր է այդ փոփոխության մասին գրավոր հայտնել սպասարկող ստորաբաժանմանը՝ նշված գործունեության իրականացման նոր վայրը (հասցեն), կտրոնի սերիան ու համարը և սույն կարգի 7-րդ կետում նշված տեղեկությունները:

12. *Անմիջականորեն (խաղասրահում) ինտերնետ շահումով խաղերի*[*1)] կազմակերպման համար նախատեսված համակարգիչները կիրառումից (օգտագործումից) հանելու դեպքում (բացառությամբ նորոգման, սպասարկման կամ համանման այլ դեպքերի), անկախ կիրառումից (օգտագործումից) հանելու ժամանակահատվածից, դրա մասին կազմակերպիչը նախապես գրավոր հայտնում է սպասարկող ստորաբաժանմանը՝ նշելով համակարգչի վրա փակցված կտրոնի սերիան ու համարը, սույն կարգի 7-րդ կետում նշված տեղեկությունները և գործունեության իրականացման վայրը: Այդ դեպքում համակարգչի վրա փակցված կտրոնը պոկվում և ոչնչացվում է կազմակերպչի կողմից:

13. Կազմակերպիչների կողմից նոր համակարգիչներ, այդ թվում՝ կիրառումից (օգտագործումից) հանված, կիրառելու դեպքում այդ համակարգիչների դրոշմավորումը, կնքումը և հաշվառումն իրականացվում է սույն կարգին համապատասխան:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ- ՆԱԽԱՐԱՐ Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՁԵ
_____ -ի
(սպասարկող ստորաբաժանման անվանումը)

պետ _____

Դ Ի Մ Ո Ւ Մ

ՀԱՄԱԿԱՐԳԻՉՆԵՐԻ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ, ԿՆՔՄԱՆ ՈՒ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿՏՐՈՆ ՍՏԱՆԱԼՈՒ

1. Կազմակերպչի անվանումը								
2. Կազմակերպչի գտնվելու վայրը								
3. Կազմակերպչի ՀՎՀՀ-ն								
4. *(հանվել է)*[*1)]								
5. Լիցենզիայի _____ _____ _____ (սերիան) (համարը) (տալու օրը, ամիսը, տարեթիվը)								
6. Հեռախոսահամարը								

Համակարգիչների դրոշմավորման, կնքման ու հաշվառման համար խնդրում եմ հատկացնել հետևյալ թվով հաշվառման կտրոններ՝

NN ը/կ	Գործունեության իրականացման վայրը (հասցեն)	Հաշվառման կտրոնների թիվը	
		թվով	տառերով
1.			
2.			
3.			
4.			
…			

Տնօրենի (պաշտոնատար անձի) _____ _____
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

Կ.Տ.

Դիմումը ներկայացնելու ժամկետը _____ _____ 200 __թ.

**1) ԼՂՀ կառավարության 07.07.10թ. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 915 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 363-Ն որոշման խմբագրությամբ*